Բըրբենքի քաղաքապետարանը հայտարարում է 2026թ. նոյեմբերի 3-ի ընտրություններում քվեարկության դրվող տեղական երեք նախագծերի մասին

Բըրբենք, Կալիֆորնիա (22 հուլիսի, 2026թ.). Բըրբենքի քաղաքային խորհուրդը 2026թ. նոյեմբերի 3-ի քաղաքային ընտրությունների քվեաթերթիկում ընդգրկել է տեղական երեք նախագիծ, որոնք վերաբերում են քաղաքային բարձրորակ ծառայությունների պահպանմանն ու քաղաքային խորհրդի հետագա ընտրություններին:

Բըրբենքի քաղաքապետարանի «Քաղաքային ծառայությունների մասին» նախագիծ. Բըրբենքի քաղաքապետարանի «Քաղաքային ծառայությունների մասին» նախագծով նախատեսվում է հյուրանոցների և մոթելների հյուրերի կողմից վճարվող զբոսաշրջային հարկը 10%-ից բարձրացնել 12%-ի: Ընտրողների կողմից հաստատվելու դեպքում նախագիծն, ըստ հաշվարկների, տարեկան կապահովի մոտ 3 միլիոն դոլարի տեղական վերահսկողության տակ գտնվող միջոցներ, որոնք կուղղվեն քաղաքային ծառայությունների պահպանմանը, այդ թվում՝ հասարակական անվտանգությանը, 9-1-1 արտակարգ արձագանքմանը, աղետներին պատրաստվածությանն ու անտառային հրդեհների կանխարգելմանը, զբոսայգիներին, գրադարաններին, փողոցներին ու ժամանցային ծրագրերին: Քաղաքի հյուրանոցային հարկն անփոփոխ է մնացել 1983 թվականից ի վեր:

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք BurbankCA.gov/TOT-Measure կայքէջը:

Քաղաքային խորհրդի ընտրությունների վերաբերյալ նախագծեր
Ընտրողները կքննարկեն նաև երկու փոխկապակցված նախագծեր, որոնք վերաբերում են քաղաքային խորհրդի անդամների ընտրության կարգին:

Քաղաքի կանոնադրության փոփոխության վերաբերյալ նախագծով նախատեսվում է թարմացնել քաղաքի կանոնադրությունը՝ քաղաքային խորհրդին և ընտրողներին հնարավորություն ընձեռելու, որպեսզի վերջիններս կարողանան արձագանքել նահանգային օրենսդրության, ընտրական պահանջների կամ դատարանի վճիռների հետագա փոփոխություններին: Սա քաղաքապետարանին հնարավորություն կտա հարմարվելու ընտրական փոփոխվող իրողություններին կամ իրավական պահանջներին և նվազեցնելու ծախսատար դատական վեճերի ռիսկը:

Ըստ ընտրատարածքների քաղաքային խորհրդի ընտրությունների անցկացման մասին նախագծի ընտրողներին առաջարկվում է որոշել՝ արդյոք Բըրբենքը պետք է 2028 և 2030 թվականների ընտրությունների համար համաքաղաքային ընտրակարգից անցում կատարի ըստ ընտրատարածքների խորհրդի անդամների ընտրության համակարգին: Քանի որ քաղաքապետարանն առանց կանոնադրության փոփոխության չի կարող ըստ

ընտրատարածքների ընտրություններ անցկացնել, «Ըստ ընտրատարածքների խորհրդի ընտրությունների մասին» նախագիծը չի կարող ուժի մեջ մտնել, քանի դեռ ընտրողները չեն հաստատել նաև «Կանոնադրության փոփոխության մասին» նախագիծը:

Քաղաքապետարանը պատրաստել է տեղեկատվական էջ, որտեղ ներկայացված է լրացուցիչ տեղեկատվություն յուրաքանչյուր նախագծի վերաբերյալ, այդ թվում՝ դրանց փոխկապակցվածության և ընտրողների քվեարկության արդյունքներից կախված հնարավոր զարգացումների մասին:

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք BurbankCA.gov/Election-Measures կայքէջը:

Քաղաքապետարանը կշարունակի տեղեկատվության տրամադրումը մինչև ընտրությունների օրը՝ ապահովելու, որպեսզի բնակիչները հստակ պատկերացում կազմեն յուրաքանչյուր նախագծի վերաբերյալ: Լրացուցիչ նյութերին և հաճախ տրվող հարցերին կարող եք ծանոթանալ համապատասխան նախագծերի կայքէջերում:

Քաղաքային ընդհանուր ընտրությունները տեղի կունենան 2026թ. նոյեմբերի 3-ին՝ երեքշաբթի օրը, իսկ փոստով քվեարկության քվեաթերթիկները ընտրողները կստանան հոկտեմբերի սկզբին: